

**ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ՝ ՆԵՐԱՌՅԱԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

Փաստաբանի թույլատրելի վարքագծի կանոնները և փաստաբանական էթիկայի սկզբունքները կարգավորվում են Դեոնթոլոգիայի միջոցով: Դեոնթոլոգիան մասնագիտական վարքագծի տեսանկյունից ներառում է հիմնականում երկու կարևոր մասնագիտություն բժշկի և իրավաբանի մասնագիտությունները: Իրավաբանական դեոնթոլոգիան փնտրում է միջոցներ իրավաբանների արդյունավետ և արհեստավարժ շփման ինչպես գործընկերների, այնպես էլ իրենց վստահորդների հետ, փաստաբան-գործատու, փաստաբան-դատարան հարաբերություններում:

Փաստաբանական ծառայություն մատուցելու (իրավաբանական օգնություն ցույց տալու) մասին պայմանագիր կնքելն ունի կարևոր նշանակություն փաստաբանի և վստահորդի փոխհարաբերությունները կարգավորելու տեսանկյունից: Այն նաև հանդիսանում է վստահորդի և փաստաբանի երաշխիքը վեճի դեպքում իրենց փոխհարաբերությունները պարզելու և վեճը լուծելու համար:

Համաձայն ՀՀ Փաստաբանի վարքագծի կանոնագրի՝ փաստաբանը գործն ընդունելուց հետո, եթե այն կատարելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքի հասարակ գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք է կնքվի ողջամիտ ժամկետում (հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքներ կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:

Անհատույց հիմունքներով իրավաբանական օգնություն ցույց տալու դեպքում, փաստաբանի և վստահորդի միջև պայմանագիր կնքելը ցանկալի է, հետագայում նրանց միջև առկա տարաձայնությունները լուծելու նպատակից ելնելով:

Վճարովի հիմունքներով փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագրում պետք է նախատեսվի՝ հոնորարի չափը, վճարման կարգը, հանձնարարության բնույթը և ծավալը (ատյանը, փուլը և այլն) կամ այն որոշելու չափորոշիչները:

Փարիզի փաստաբանական պալատի ներքին կանոնակարգի համաձայն՝ արգելվում է փաստաբանական ծառայությունների պայմանագրով ֆիքսել հոնորարի չափը՝ quota litis պակտի սկզբունքներով: Այն փաստաբանի և վստահորդի միջև կնքվող պայմանագիր է, որը հոնորարի չափը պայմանավորում է բացառապես դատական գործի արդյունքի հետ, որն էլ արգելվում է

Ֆրանսիայում: Փաստաբանին հոնորարը կարող է փոխանցել միայն վստահորդը կամ այդ նպատակով հատուկ լիազորված անձը<sup>1</sup>:

Փաստաբանն իր մասնագիտական պարտավորությունների բարեխիղճ և որակյալ կատարումից բացի, այլ երաշխավորություն չի կարող տալ, մասնավորապես չի կարող երաշխավորել հանձնարարության կատարման արդյունքը՝ անկախ արդյունքի կանխատեսելիությունից, երբ այդ արդյունքը կախված է դատավորի կամ վարույթն իրականացնող մարմնի որոշումից:

Այս սկզբունքը գործում է թե՛ Կալիֆորնիայի փաստաբանի մասնագիտական վարքագծի կանոններով<sup>2</sup> և թե՛ Փարիզի փաստաբանական պալատի ներքին կանոնակարգով<sup>3</sup>:

### ***Տաթևիկ Շալջյան***

*ՀՀ փաստաբանների պալատի  
երիտասարդական խորհուրդ*

---

<sup>1</sup> [http://dl.avocatparis.org//reglement\\_interieur/RIBP.htm](http://dl.avocatparis.org//reglement_interieur/RIBP.htm)

<sup>2</sup> <http://rules.calbar.ca.gov/Rules/RulesofProfessionalConduct/CurrentRules.aspx>

<sup>3</sup> [http://dl.avocatparis.org//reglement\\_interieur/RIBP.htm](http://dl.avocatparis.org//reglement_interieur/RIBP.htm)